ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ապաստանի տրամադրման վարչության
ապաստանի հայցի քննման բաժնի պետ
Սեդա Հարությունյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2026 թվականի ապրիլի 3-ից մինչև 2026 թվականի հուլիսի 10-ը ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետ Նաիրա Պավլիկի Եղիազարյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ**

1. Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.
2. իրականացրել եմ ապաստան ստանալու դիմումների վարույթ և կայացրել եմ դրանց վերաբերյալ որոշումներ.
3. իրականացրել եմ ապաստան հայցողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքներ.
4. պատասխանել եմ քաղաքացիների և պետական կառույցներից ստացված հարցումներին՝ կապված ՀՀ-ում փախստականի կարգավիճակի և ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ.
5. Բաժնի էլեկտրոնային համակարգով պատրաստել և հաստատման եմ ուղարկել ապաստան հայցող դիմումատուների ծանուցումները, ինչպես նաև նրանց վերաբերյալ հարցումներ եմ ուղարկել համապատասխան պետական կառավարման մարմիններ.:
6. 2026 թվականի ապրիլի 14-ին մասնակցել եմ «Միգրացիայի կառավարման և ինտեգրման հզորացում.Շվեդիա-Հայաստան երկկողմ նախաձեռնություն 2025-2029» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Շվեդիայի միգրացիոն գործակալության ապաստանի, արգելանքի, վերադարձի ընթացակարգը» աշխատարանին.
7. 2026 թվականի ապրիլի 28-ին մասնակցել եմ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից կազմակրեպված ՄՔԾ-ՄԱԿ ՓԳՀ առաջին եռամսակային հանդիպմանը.
8. 2026 թվականի մայիսի 13-ին մասնակցել եմ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից կազմակերպված «ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացումը Մոլդովայում և Վրաստանում» թեմայով ուսումնասիրության ներկայացմանը:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ԱՀՔ բաժնի փորձագետ՝ Ն.Պ.Եղիազարյան

«14» հուլիսի 2026թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները
գնահատում եմ՝ գնահատելի

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի
քննման բաժնի պետ՝ Ս. Հարությունյան

«14» հուլիսի 2026թ.